ՏԵՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

Գավառ

2025թ.

ՆԱԽԱԲԱՆ **2**

Հայեցակարգի ռազմավարական ուղղությունները **3**

Հայեցակարգի ռազմավարական նպատակները **3**

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ **5**

Ռիսկերի և խոչընդոտների հաղթահարման ուղիներ **8**

Ֆինանսավորման աղբյուրները **11**

1. Համայնքային բյուջե 11

2. Միջազգային դոնորներ և գործընկեր կառույցներ 11

3. ՔՀԿ-ների միջոցով գրավվող ֆինանսավորում 12

Հայեցակարգի գնահատման մեթոդաբանությունը **14**

1. Գնահատման ժամանակացույցը 15
2. Գնահատման պատասխանատուները 16

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Եզրույթ / Հապավում	Բացատրություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին (օրինակ՝ համայնքապետարան, ավագանի):
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (օր.՝ մշակույթի տուն, գրադարան, մանկապարտեզ):
Ապատեղեկատվություն	Կեղծ կամ մոլորեցնող տեղեկատվություն, որը տարածվում է միտումնավոր՝ հասարակական կարծիքի ձևափոխման, պառակտման կամ ազդեցության նպատակով:
Մեդիագրագիտություն	Մեդիամիջավայրում տեղաշարժվելու, տեղեկատվություն վերլուծելու, տարբերելու, կասկածելու և փաստերի ստուգման ունակություն:
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն (հասարակական կազմակերպություն, հիմնադրամ և այլն):
Ռազմավարական հաղորդակցություն	Պլանավորված և նպատակային հաղորդակցման գործընթաց, որի նպատակն է վստահություն կառուցել, վարքագիծ փոխել կամ ամրապնդել հաղորդակցվող կողմերի միջև կապը:
Ինստիտուցիոնալ կարողություններ	Կազմակերպության՝ տվյալ դեպքում համայնքապետարանի կամ նրա ենթակայության մարմինների կարողությունը՝ արդյունավետորեն կառավարելու ծրագրեր, գործընթացներ և հաղորդակցություն:
Դիմակայունություն	Հասարակության ունակությունը՝ ճանաչելու, հասկանալու և արձագանքելու ապատեղեկատվությանը՝ չընկնելով դրա ազդեցության տակ:
Դիմակայունության նշաններ	Իրական կամ չափելի փոփոխություններ, որոնք վկայում են հանրության կարողության բարձրացման մասին ապատեղեկատվության պայմաններում (օրինակ՝ կասկածելի լուրերի մասին հաղորդելը, փաստերի ստուգման օգտագործում):
Մեդիափաստեր	Համայնքում տարածվող կոնկրետ տեղեկատվական նյութեր (հոդված, տեսանյութ, սոցիալական ցանցի հրապարակում), որոնք վերաբերում են իրական դեպքերին և ստուգվում են ճշգրտության տեսանկյունից:
Փաստերի ստուգում (fact-checking)	Լրատվության և տեղեկատվության աղբյուրների ստուգման գործընթաց՝ կեղծ, մոլորեցնող կամ ոչ ճշգրիտ տվյալների բացահայտման նպատակով:
ՔՊԳ	Քաղաքացիական կրթության ծրագրեր, որոնք ներառում են քննադատական մտածողություն, մեդիագրագիտություն, տեղեկատվական հիգիենա և այլն:

Եզրույթ / Հապավում	Բացատրություն
Եռամսյակային մոնիթորինգ	Գործողությունների պարբերաբար կատարվող գնահատում՝ յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ ծրագրի ընթացքի վերահսկման համար:
Հաշվետվողականություն	Մարմինների պարտականությունը՝ հասարակությանը ներկայացնել իրենց որոշումները, ծախսերը և արդյունքները՝ թափանցիկ եղանակով:

ՆԱԽԱԲԱՆ

- ***Հիմնախնդիր, առկա իրավիճակ***

Ապատեղեկատվությունն իր բոլոր տեսակներով և դրսևորումներով այլևս դարձել է գլոբալ մարտահրավեր և սպառնալիք պետությունների և հասարակությունների համար: Վերջին տարիներին, պայմանավորված Հայաստանի անվտանգային և ներքին ժողովրդավարական խնդրահարույց գործընթացներով, ապատեղեկատվական հոսքերը կիրառվում են տարբեր նպատակներով: Դրանք օգտագործվում են թե՛ ներքաղաքական նպատակահարմարությունից ելնելով, թե՛ հասարակության տարբեր խմբերի թիրախավորելու և թե՛ Հայաստանի Հանրապետության ներքին դիմադրողականությունը թուլացնելու նպատակով տեղեկատվական պատերազմների տրամաբանության մեջ: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ապատեղեկատվությունը որպես գլոբալ մարտահրավեր առանձնացվում է արդեն իսկ տարբեր միջազգային դերակատարների և պետությունների կողմից: Համաշխարհային ռիսկերի զեկույցում (2024թ.) արհեստական բանակությամբ ստեղծված ապատեղեկատվությունը կարճաժամկետ ռիսկերի դրսևորման հարթության վրա համարվում է գլխավոր սպառնալիքը:

Նման պայմաններում կարևոր է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների ուժերի համախմբմամբ ունենալ քաղաքականություններ, որոնք մատնանշում են այն

հիմնական ուղղություններն ու ոլորտները, որտեղ պատասխանատու մարմիններն ունեն անելիք: Առաջին նման փորձը տեղի է ունեցել միայն վերջերս, երբ ընդունվեց «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգը 2024-2026»:

Ներկայումս, ՀՀ-ում ապատեղեկատվության դեմ պայքարը չունի շատ լուրջ հաջողություններ: Ասվածի վառ ապացույցը տարբեր ուսումնասիրություններով ձեռք բերված տվյալներն են, որոնք փաստում են, որ հայ հանրության շրջանում ապատեղեկատվության բացահայտման, հակազդման հմտությունները գտնվում են ոչ բավարար մակարդակի վրա: Մասնավորապես, ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի՝ Հայաստանում 2020թ. անցկացրած հետազոտության համաձայն՝ հարցվածների 48%-ն ամեն օր հանդիպում է ապատեղեկատվության և մոլորեցնող լուրերի: Իսկ 2021 թվականի Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի ուսումնասիրության համաձայն՝ մարդկանց 80%-ը ոչ մի քայլ չի ձեռնարկում կասկածելի տեղեկության հանդիպելիս:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ չնայած նման պատկերին, Հայաստանում կան փոքրաթիվ կազմակերպություններ, որոնք խթանում են մեդիակրթությունը, նպաստում՝ ապատեղեկատվության բացահայտմանն ու նման դեպքերի հանրայնացմանը: Իհարկե, խոսքը այս դեպքում սահմանափակ ռեսուրսներ ունեցող հասարակական կազմակերպությունների, ՁԼՄ-ների և փաստերի ստուգման հարթակների մասին է:

Հայեցակարգի ռազմավարական ուղղությունները

- *Գավառ համայնքի համայնքապետարանի և դրան ենթակա ինստիտուտների և դրա ներկայացուցիչների կարողությունների զարգացում,*
- *Գավառ համայնքի համայնքապետարանի, համայնքում գործող մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների միջև համագործակցության խթանում,*
- *Գավառ համայնքում մեդիագրագիտության և քննադատական մտածողության գիտելիքների և հմտությունների բարելավում:*

- ***Հայեցակարգի ռազմավարական նպատակները***

- *Զարգացնել Գավառ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց ենթակայության տակ գտնվող աշխատակիցների կարողունակությունները ապատեղեկատվության դեմ պայքարի և մեդիագրագիտության ոլորտում,*
- *Խթանել Գավառ համայնքում մասնավոր ոլորտի ներկայացուցիչների և համայնքապետարանի միջև փոխգործակցությունը ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգից բխող գործողություններում,*
- *Բարձրացնել հասարակական դիմակայունությունը Գավառ համայնքում ապատեղեկատվության դեմ պայքարից բխող գործողություններում:*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1:

Գավառ համայնքի համայնքապետարանի և դրան ենթակա ինստիտուտների և դրա ներկայացուցիչների կարողությունների զարգացում

- Շարունակական վերապատրաստումներ ՏԻՄ ներկայացուցիչներ և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների շրջանում,
- Գավառի համայնքապետարանի և դրան ենթակա մարմինների ռազմավարական հաղորդակցության բարելավում,
- Գավառի համայնքապետարանի և դրան ենթակա մարմինների թափանցիկության և հաշվետվողականության ստանդարտների մշակում և ներդնում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2:

Գավառ համայնքի համայնքապետարանի, համայնքում գործող մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների միջև համագործակցության խթանում

- Մասնավոր հատվածի ռեսուրսների քարտեզագրում, ներգրավում և մոբիլիզացիա

- Տեղական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3:

Գավառ համայնքում մեդիագրագիտության և քննադատական մտածողության գիտելիքների և հմտությունների բարելավում

- Քաղաքացիական կրթություն և ոչ ֆորմալ կրթական ծառայություններ,
- Հանրակրթական հաստատություններում վերապատրաստումներ և մեդիագրագիտության թեմաների ինտեգրում:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ռազմավարական ուղղություն	**Գործողություն**	**Ակնկալվող արդյունքներ**	**Պատասխանատուներ**
1. Գավառ համայնքի համայնքապետարանի և դրան ենթակա ինստիտուտների և դրա ներկայացուցիչների կարողությունների զարգացում	Իրականացնել վերապատրաստումներ ՏԻՄ ներկայացուցիչների և ՀՈԱԿ-ների ներկայացուցիչների, ավագանու անդամների, մանկավարժական անձնակազմի և համայնքի ակտիվ քաղաքացիների շրջանում ապատեղեկատվության, դրա տեսակների, մեդիագրագիտության գործիքներ, արհեստական բանականության, ռազմավարական հաղորդակցություն թեմաների շուրջ	Յուրաքանչյուր տարի իրականացնել առնվազն 5 վերապատրաստում՝ ներգրավելով 50 ՏԻՄ և ՀՈԱԿ ներկայացուցիչների, ինչպես նաև ավագանու անդամների, մանկավարժական անձնակազմի և համայնքի ակտիվ քաղաքացիների:	Գավառի համայնքապետարան և տեղական ՀԿ-ներ
	Մշակել Գավառ համայնքի ռազմավարական հաղորդակցության պլան	Համայնքի ավագանու որոշմամբ ընդունել համայնքի ռազմավարական հաղորդակցության պլանը, որը կարող է թարմացվել 5 տարին մեկ կամ ըստ անհրաժեշտության:	Գավառի համայնքապետարան
	Մշակել համայնքապետարանի հաղորդակցության	Համայնքի ավագանու որոշմամբ ընդունել	Գավառի համայնքապետ

	ինքնագնահատման ստանդարտներ, որը կհանդիսանա ՏԻՄ-երի կողմից սեփական հաղորդակցության շարունակական բարելավման ուղեցույցը:	հաղորդակցության ինքնագնահատման ստանդարտներ, որը կարող է թարմացվել 5 տարին մեկ կամ ըստ անհրաժեշտության:	տարան և տեղական ՀԿ-ներ
2. Գավառ համայնքի համայնքապետարանի, համայնքում գործող մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների միջև համագործակցության խթանում	Ստեղծել համագործակցության հարթակ, որը կմիավորի Գավառ համայնքում գործունեություն ծավալող մասնավոր, հասարակական հատվածի ակտիվ ներկայացուցիչներին: Համագործակցության հարթակի ձևաչափը, կարող է որոշվել ՏԻՄ-Մասնավոր-ՔՀԿ երկխոսության հանդիպումների արդյունքում: Համագործակցության հարթակի շարունակականության ապահովման և կայունության ապահովման համար կարևոր է մշակել հարթակի աշխատակարգ, որտեղ կարտացոլվեն հարթակի աշխատանքների կազմակերպման պատասխանատուները, աշխատանքի պլանը, հանդիպումների պարբերականությունը:	ՏԻՄ-Մասնավոր հատված-ՔՀԿ հատված համագործակցության փոխընդունելի 1 հարթակի ստեղծում:	Գավառի համայնքապետարան և տեղական ՀԿ-ներ
	Քարտեզագրել մասնավոր և հասարակական հատվածում առկա ներուժը ապատեղեկատվության դեմ պայքարի գործընթացում	Մեկ միասնական տվյալների բազա, որում արտացոլված են համայնքի հասարակական և մասնավոր հատվածի ներուժը ապատեղեկատվության դեմ պայքարի գործընթացում:	Գավառի համայնքապետարան և տեղական ՀԿ-ներ
	Մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ իրականացնել տարբեր բնույթի իրազեկման արշավներ հասարակության կարիքներին համապատասխան զգայուն թեմաների շուրջ	Առնվազն 1 իրազեկման արշավ մեկ տարվա ընթացքում	Գավառի համայնքապետարան և տեղական ՀԿ-ներ

	Մասնավոր և հասարակական հատվածի ներկայացուցիչների հետ համագործակցությամբ իրականացնել հասարակության դիմակայունության բարձրացմանն ուղղված դասընթացներ, վերապատրաստումներ, հոլովակների շարք մեդիագրագիտության վերաբերյալ և այլն:	Առնվազն 6 դասընթաց մեկ տարվա ընթացքում, որը կներգրավվի առնվազն 200 մասնակցի	Գավառի համայնքապետարան և տեղական ՀԿ-ներ
3. Գավառ համայնքում մեդիագրագիտության և քննադատական մտածողության գիտելիքների և հմտությունների բարելավում	Ապատեղեկատվության դեմ պայքարի, մեդիագրագիտության և հարակից թեմաներով քաղաքացիական կրթության փոքր դրամաշնորհների հայտարարում և տրամադրում:	Տրամադրել առնվազն 3 փոքր դրամաշնորհ համայնքում գործող ՀԿ-ներին քաղաքացիական կրթության ծառայություններ տրամադրելու նպատակով:	Գավառի համայնքապետարան և տեղական ՀԿ-ներ
	Հանրակրթական հաստատություններում, համայնքային գրադարաններում, մշակույթի կենտրոններում հայտարարել տարբեր բնույթի մրցույթներ աշակերտների և ուսուցիչների շրջանում ապատեղեկատվության դեմ պայքարելու դիմակայունության բարձրացման նպատակով (օրինակ՝ արվեստի մրցույթներ, քննարկումներ, թեմատիկ շարադրություններ, կարճամետրաժ հոլովակներ և այլն):	Կազմակերպել առնվազն նման 5 մրցույթ մեկ տարվա ընթացքում	Գավառի համայնքապետարան և տեղական ՀԿ-ներ

Ռիսկերի և խոչընդոտների հաղթահարման ուղիներ

Սույն հայեցակարգի իրագործման խոչընդոտների վերլուծության արդյունքում վեր են հանվել հետևյալ ռիսկերը և դրանց հաղթահարման ուղիները:

Ռիսկ 1. Մասնակիցների անբավարար մոտիվացիա և ներգրավվածություն

ՏԻՄ-երի, ՀՈԱԿ-ների կամ հասարակական հատվածի ներկայացուցիչները կարող են չունենալ բավարար մոտիվացիա մասնակցելու վերապատրաստումներին կամ ալ գործողություններին՝ ծանրաբեռնվածության, թերահավատության կամ գիտելիքի պակասի պատճառով:

Հաղթահարման ուղիներ

- Հստակ շեշտադրել վերապատրաստումների օգտակարությունը՝ ներկայացնելով հաջողված օրինակներ:
- Ներառել խրախուսման մեխանիզմներ՝ հավաստագրեր, ճանաչում, տեսանելիություն:

Ռիսկ 2. Ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակումներ

ՏԻՄ-երին կարող է պակասել անհրաժեշտ փորձառությունը, մեթոդաբանությունը կամ մարդկային ռեսուրսները ռազմավարական հաղորդակցությունը զարգացնելու համար:

Հաղթահարման ուղիներ

- Արտաքին փորձագետների ներգրավում հաղորդակցության պլանի և ինքնագնահատման ստանդարտների մշակման փուլում:
- Տեխնիկական աջակցություն մասնավոր կամ միջազգային գործընկերների միջոցով:

- Կազմակերպչական կարողությունների աստիճանական զարգացում՝ վերապատրաստումների միջոցով:

Ռիսկ 3. Մեդիագրագիտության նկատմամբ հասարակական անտարբերություն կամ թերահավատություն

Բնակչության որոշ խմբեր կարող են չհավատալ ապատեղեկատվության վտանգին կամ չտարբերակել ապատեղեկատվությունը փաստերից:

Հաղթահարման ուղիներ

- Իրազեկման արշավների տեղայնացում՝ օգտագործելով բարբառային լեզու և համայնքին հարազատ օրինակներ:
- Հոլովակներ և հաղորդագրություններ՝ բովանդակային պարզությամբ և հուզական ազդեցությամբ:
- Երիտասարդների ակտիվ ներգրավում, որոնք կարող են դառնալ համայնքային դեսպաններ:

Ռիսկ 4. Համագործակցության ոչ բավարար մակարդակ մասնավոր և հասարակական հատվածի միջև

Համագործակցությունը երկու հատվածների միջև կարող է խոչընդոտվել վստահության պակասի կամ շահերի բախման պատճառով:

Հաղթահարման ուղիներ

- Կազմակերպել ընդհանուր աշխատաժողովներ և վստահության կառուցման ֆորումներ:
- Բաց, թափանցիկ գործընթաց՝ հստակ նպատակների, դերերի և ակնկալիքների ձևակերպմամբ:

- Նպաստել շարունակական շփման հարթակների ստեղծմանը՝ օնլայն կամ օֆլայն ձևաչափով:

Ռիսկ 5. Ֆինանսական և նյութական ռեսուրսների սղություն

Գործողությունների իրականացումը կարող է խաթարվել ֆինանսների կամ տեխնիկական միջոցների բացակայությամբ:

Հաղթահարման ուղիներ

- Դիմել միջազգային, պետական կամ մասնավոր դրամաշնորհների:
- Հրապարակել բաց տվյալներ, որպեսզի հնարավոր գործընկերները տեղեկանան նախաձեռնության մասին:
- Օգտագործել ցածր ծախսով կամ կամավորական մեթոդներ՝ հատկապես մեդիագրագիտության արշավներում:

Ֆինանսավորման աղբյուրները

Հայեցակարգը կարող է ֆինանսավորվել մի քանի հնարավոր աղբյուրներից՝ կախված շահագրգիռ կողմերի համագործակցության մակարդակից, համայնքի նախաձեռնողականությունից և առկա ռեսուրսներից:

Ֆինանսավորման աղբյուրներ և մեխանիզմներ

1. Համայնքային բյուջե

- Գավառի համայնքապետարանը կարող է սահմանել փոքր ֆինանսական հատկացում՝ մեդիագրագիտության, վերապատրաստումների կամ հաղորդակցության պլանի մշակման համար:

- Տարեկան բյուջեի պլանավորման փուլում նախատեսել համապատասխան տող՝ «Հանրային իրազեկում և հաղորդակցություն» կամ «Մեդիագրագիտության ծրագրեր» վերնագրով:

2. Միջազգային դոնորներ և գործընկեր կառույցներ

Մեխանիզմ.

- Մշակել և ներկայացնել դրամաշնորհային հայտեր՝ հիմնվելով հայեցակարգի ռազմավարական ուղղությունների վրա:
- Օգտագործել համայնքի և հասարակական կազմակերպությունների համատեղ դիմումների ձևաչափ:

Հնարավոր դոնորներ կարող են լինել՝

- ԵՄ պատվիրակություն Հայաստանում (EU Delegation)
- ԱՄՆ ՄԶԳ (USAID)
- ՄԱԶԾ (UNDP)
- Եվրոպական հիմնադրամներ (Konrad Adenauer Stiftung, Friedrich Ebert Stiftung, DW Akademie)
- ՀԲԸՄ, Repat Armenia, HALO Trust և այլ կազմակերպություններ՝ ըստ ծրագրի նպատակի:

3. ՔՀԿ-ների միջոցով ներգրավվող ֆինանսավորում

- Գավառում գործող հասարակական կազմակերպությունները կարող են հանդես գալ որպես գործընկերներ կամ հիմնական շահառուներ՝ ներգրավվելով մեդիագրագիտության ծրագրերում:
- Հայեցակարգը կարող է ծառայել որպես հիմք՝ համայնքային կարիքների փաստարկման համար: ՔՀԿ-ները կարող են դիմել ոլորտային դրամաշնորհային ծրագրերի:

4. Մասնավոր հատվածի ներգրավում (Corporate Social Responsibility – CSR)

- Գավառում գործող բիզնեսները կարող են ներգրավվել համայնքային զարգացումներին՝ տեղեկատվական անվտանգությունը դիտարկելով որպես ընդհանուր շահ:
- Գործարար համայնքի հետ կառուցել փոխշահավետ համագործակցություն՝ օրինակ՝ սեմինարների հովանավորում, տեխնիկայի տրամադրում, մրցանակային ֆոնդեր դպրոցական մրցույթների համար:

5. Համագործակցություն կրթական հաստատությունների հետ

- Գավառի պետական համալսարան, դպրոցներ, քոլեջներ կարող են տրամադրել մարդկային և նյութական ռեսուրսներ՝ փոխադարձ շահույթի հիման վրա:
- Համալսարանական դասախոսներ և ուսանողներ կարող են ներգրավվել որպես դասընթացավարներ, կամավորներ կամ հետազոտողներ:

6. Կամավորություն և համախմբվածություն

- Որոշ գործողություններ՝ ինչպես օրինակ հանրային քննարկումներ, մեդիաարշավներ, կարող են իրականացվել կամավոր հիմունքներով՝ ներգրավելով երիտասարդություն, ուսանողներ, համայնքային ակտիվներ:
- Ստեղծել կամավորական հարթակ կամ միավորել առկա նախաձեռնությունները մեկ ընդհանուր մեդիագրագիտության ցանցում:

Հայեցակարգի գնահատման մեթոդաբանությունը

Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգի արդյունավետ իրագործումը պահանջում է նաև գործողությունների գնահատման մեթոդաբանություն, որը կապահովի հաշվետվողականություն, շարունակական բարելավում և արդյունքների տեսանելիություն: Հայեցակարգի գնահատման մեթոդաբանության *նպատակը գործողությունների արդյունավետության չափումն է, ինչպես նաև հետադարձ կապի ապահովումը ռազմավարության ճշգրտման և կատարելագործման նպատակով:*

Գնահատումը կիրականացվի հետևյալ **երեք մակարդակներում՝**

- **Ներդրվող միջոցների գնահատում (Input Evaluation)**
  Արձանագրել ֆինանսական, մարդկային և կազմակերպչական ռեսուրսների ներգրավման մակարդակը:
- **Գործընթացի գնահատում (Process Evaluation)**
  Ուսումնասիրել, թե որքանով են ծրագրերը և գործողությունները իրականացվում ըստ նախանշված պլանի, ժամկետների և մեթոդաբանության:
- **Արդյունքների գնահատում (Outcome Evaluation)**
  Չափել ծրագրի ազդեցությունը՝ մեդիագրագիտության մակարդակի բարձրացման, ապատեղեկատվության տարածման նվազման և դիմադրողականության ամրապնդման տեսանկյունից:

Գնահատման հիմնական գործիքները

Գործիք	Նկարագրություն

Մոնիթորինգի ձևաթղթեր / հաշվետվություններ	Յուրաքանչյուր գործողության համար մշակվում է պարզ հաշվետվության ձև՝ մասնակցության, բովանդակության, արդյունքների նկարագրությամբ:
Մասնակիցների հարցաշարեր / կարծիքների վերլուծություն	Վերապատրաստումներից հետո հավաքվում է մասնակիցների արձագանքը, հարցվում գիտելիքների փոփոխության մասին:
Ֆոկուս խմբեր և խորացված հարցազրույցներ	Իրականացվում են տարվա կտրվածքով՝ գնահատելու համայնքային ընկալումները, կարիքներն ու ազդեցությունները:
Քանակական ցուցանիշների վերլուծություն	Օրինակ՝ վերապատրաստված անձանց քանակը, դասընթացների, իրազեկման արշավների, մրցույթների թիվը, տեղայնացված մեդիափաստերի թիվը և այլն:
Որակական գնահատականներ	Ուսումնասիրում են մեդիագրագիտության հասկացողության խորությունը, դիմակայունության նշանները և համայնքի արձագանքը:

Գնահատման ժամանակացույցը

Պարբերականություն	Գործողություններ
Եռամսյակային	Մոնիթորինգի ձևաթղթերի համալրում, ընթացիկ վերլուծություն

Տարեկան	Միջանկյալ համապարփակ հաշվետվություն, գնահատական և անհրաժեշտության դեպքում՝ ուղղումներ ռազմավարական ուղղություններում
Ծրագրի ավարտին	Եզրափակիչ գնահատում, վերլուծություն ծրագրի ընդհանուր արդյունավետության վերաբերյալ, հաջողված փորձի ամփոփում

Գնահատման պատասխանատուները

- Համայնքապետարան / նշանակված պատասխանատու ստորաբաժանում՝ ընդհանուր համակարգման համար,
- Կամավոր գնահատման թիմ (ՔՀԿ, փորձագետներ)՝ անկախ դիտարկման ապահովման համար,
- Մասնակից ՀԿ-ներ և կրթական հաստատություններ՝ տեղական մակարդակով տվյալների հավաքագրման և վերլուծության գործում:

Գնահատման արդյունքների օգտագործումը

Գնահատման արդյունքները կծառայեն՝

- Քաղաքականության շարունակական բարելավմանը,
- Համայնքային մասնակցության խթանմանը,
- Նոր համագործակցությունների հաստատմանը,
- Ֆինանսավորման հիմնավորումներին (դոնորական հայտեր, բյուջետային պլանավորում և այլն):